53. ՈՐՍՈՐԴ ՀԱՅՐԱՊԵՏ

Վախտին մեկին մեար մի ու տղա մի կըլլի, մեարը կըսե. - Որդի՛, ո՛ւր կէրթս՝ գնա՛, ծովուն քնարը մ'էրթըր:

Ըս տղան գիշերը քունը չէկավ. «Բան մի կա, - ըսըց, - ես ծովուն քնարը տ'էրթմ»:

Գընըց, մեթերիս մի շինեց, մտավ մեջը, հայավ, որ ծովուն միջուն մե տենիզ ղուշի մի էլավ, թիվերը օսկի էր. փառըլ-փառըլ փառլամիշ կըլլի: Զարկեց, նետեց փեճը, առավ էկավ տունը. քանըզիզինք էրկեն էր. կեսը ըսդին՝ գետինը կը քսվեր, կեսը ընդին: Քերդեց, չորցոց. սայրեց, կախեց պատնի վեար: Մեարը ըսըց. - Մեք աղքատ մարդիկ, ըդի տար թագավորին, որ բան մի տա, բերիք, իտարա էնիք:

էլավ, առավ գընըց թագավորին. վեզիրը նստեր էր քեմեր ղափուն:

- Անունդ ի՞նչ է, տղա՛, - ըսըց:

- Ավճի Հայրապետ:

- էաս փոստը տո՛ւր ինձի:

- Թագավորին տի տանիմ:

- էրկու հարիր օսկի, էկո կըլլի աո՞ւր, սորա կը փոշովնիս:

- Չէ՛, կը տանիմ թագավորին:

Տարավ թագավորին:

- Թագավո՛ր ապրած կենա, փեշկեշ իմ բերեր քիզի, - ըսըց:

Թագավորը կանչեց վեզիրին. - էաս Ավճի Հայրապետին խազինեն կինիս, ինչ ղտըր օ շալկե նե, էն ղտի թող շալկե, էրթա:

Վեզիրը գընոց խազինեն բացեց. իրեք ղըրըշնոց օսկի մի տվեց. իրեք էալ սիլլե զարկեց. - Ընձի չտվիր տե, թագավորին տվիր փոստը, գնա տես, քու գլոխ ինչ օյին տի հանիմ:

Վեզիրը գնոց թագավորի քով. թագավորը ըսոց. - Վեզիր, էաս փոստը ի՞նչ շինիք:

- Թագավոր ապրած՝ աղկեկ քյուրք կըլլի:

Շինեց, բերեց տվեց թագավորին: Թագավորը հագավ, պաշլայեց ֆորթա տալը:

- Վեզիր, եախշմիշ կըլլի՞:

- Շատ աղկեկ եախշմիշ կըլլի. մի բան մահանա կա. ըսուր կեորեյի ֆիլի արղա տի բերես. սարայ մի տի շինես, ըս քուրքը հարմարի:

- Վե՞վ կը բերե, ըս ղտար ֆիլ տիշի, որ մեկ սարայ շինիք:

- Ավճի Հարապետ կը բերե:

Կանչեց, ըսոց. - Ավճի Հարապետ, ֆիլ տիշի կուզիմ, մեկ սարայ տի շինիմ:

- Ես չիմ կընընը. ֆիլերուն լեառը վեվ օր էրթը, կուտեն:

- Քիզի իցցունը հինգ օր մեռվլեք՝ բերիր՝ բերիր, օր չի բերիր, գլոխդ կը կըրիմ:

Տղան լալուն էկավ մորը քով:

- Այ որդի, ինչո՞ւ կուլաս:

- Ես չլամ՝ վե՞վ տի լա. թագավորը իմ մինե ֆիլ տիշի կուզե. օր սարայ շինե:

Տղի մոր աստղաբաց թուղթ մի կար:

- Որդի՛, մենծ թուղթս վեար տուր, տեսնըմ հելե խոլայ ճանփա մի կա: Մեարը թուղթը հայավ, ըսոց. - Ես քառսուն աղբեար ունիմ Կանի կուսուլա լեառը, որդի՛, գնա. ընոք ճանփա մի հանեցին՝ հանեցին, չէնե՝ կը մընըս հոնի:

Գնոց, հասավ էնոց ղոնախը. հայավ որ մարդ չկա, ժրկվավ, էլավ քեմեր դափուին վրան. հայավ օ քառսուն հատ ակնե գըցած, շարված է, կուգան: Մենծ քեռուն սիլայնը առավ ծեռացը. էլան վերը օդան, նստան օ հարց ու բարև տ'էնին:

- Խեր ըլլի, ընդուր էղավ որ էկար ըսդին:

Տղի մորը քով էղած թղթի մեկ ընկերը էաս պուճուր աղբոր քովն էր, ըսոց. - Թագավորին ափուց մինե փախեր է:

- Այ տղա, ինչո՞ւ փոստը վեզիրին չտվիր, տարիր թագավորին տվիր, որ հիմա վեզիրը քիզի կը չարչարե, - ըսոց մեկեալ քեռին:

Քեռեստանը ըսին. - Որդի՛, մեք մեռած չիք, կէլս կէրթս թագավորին մինե կուզիս քառսուն ղաթար տեվե. ամեն ղաթար քառսունական, օր կենե հազար վեց հարիր տեվե, եոթը տարվա էալ գինի կը բառնաս քյուլլի տեվեներուն:

Տղան էկավ, թագավորին ըսըց: Թագավորը ըսըց. - Վեզիր, քյուլլի պատրաստ տես:

- Թագավոր ապրած կենա, - ըսըց տղեն, - ըդ քուլլի վեզիրին քիսեն տի ըլլի. չըլլի նե՝ տիլիսմ կավրի:

Վեզիրը գընըց, ինք իր քիսեն պատրաստ տեսավ, վրու շորերն էալ ծախեց, շինեց:

Տղան քաշեց տեվեստանը, ընկավ ճանփա. շատ գընըց, քիչ գընըց, գընըց Կանի կուսուլյա լեառը հասավ. փլեց բեռները, անդտի հայավ օր քեռեստանը շատ ուրախացան:

Մենծ քեռին ըսըց. - Աղբրտա՛նք, վե՞վ տի էրթա ֆըլերուն լեառը:

Ամենը ծեան տվեցին, թե՝ միք չենք կըրնըր էրթըր: Պուճուր աղբորը ըսին. - Ինչո՞ւ դու ծեան չըս իտար:

- Ի՞նչ ծեան տամ. մեկ էրթողը ես իմ:

Կերան, խմեցին, պարկան, առավոտնը քեռի ու եկեն էլան ընկան ճանփա. շատ գընցին, քիչ գընցին, ֆիլերուն լեառը հասան. էրկու սահաթ դեասը փլեցին բեռները. ընկա գընցին աղբրին վրա, ջուրը դառոցին, կեոլը դարտըկեցին, գինեստանը լեցոցին հոտ:

Ըդ կեոլին վրա մենծ չինարի ծառ մի կա. մեջը դարտակ էր, էրկուսն էալ մտան էադ ծառին մեջ. սիլայները քուլլի հազր էրին. հայան օր ճաշվա շոքին ֆիլերուն ճոթը փրթավ, կուգան. էրկնոց աստղերուն հսապը կա, ֆիլերուն չկա: Ջուրը խմին, ընկան պարկան ու քնան: էադ եոթ տարվա գինի էր, խմողը պայիլմիշ էղավ, ընկավ: Ետևանց մեկ թոփալ մի լընկռ-լընկռ կուգա, եոթ տարի է, որ եարալի է, եարան էալ թարախ է բռներ, պառեցնող չկա: էադ ֆիլը շատ խորագետ՝ իմաստուն էր. տեսավ օր գինի է, խմողը պայիլմիշ էղեր է, ինք չմոտեցավ:

- Ա՜խ, մե մի ըլլեր, եարաս պառեցըներ, ինչ մուրազ ուզեր, կուտայի, - ըսըց:

Ավծի Հայրապետ, ըս դընուն եարային՝ ըսըց ու զարկեց. ֆիլը պայիլ-միշ էղավ. իրեք սահաթ թարախը գընըց. խելքը գլոխը էկավ, նստավ:

- Որդի՛, - ըսըց, - մուրազդ ի՞նչ է, ուզե, տի տամ:

- Մուրազս Ֆիլերուն գլոխը կըյրիմ, արդաները քաշիմ, թագավորը ղազեպի էկեր՝ ֆիլի արդա կուզե:

- Որդի՛, անանկ բան ես բոներ օր, եոթ տարի Ֆիլերուն գլոխը խելքը չգար. տեվեներդ քաշե. էկուր, բերդի վրա տանիմ, բառնամ, էան տեղ էղած՝ մեռած Ֆիլերուն արղաները շատ կա. էսոց արղընին դժար կը քաշվին:

Գնըց, բարձավ տեվեները, հասավ Կանի կուսուլյա լեառը. փլեցին հոտի: Մեկալ օրը բեռցոցին տեվեստանը, գըցին. քեռին մընըց իրան տունը, տղան գնըց: Թագավորին խապար տվին, թե Ավճի Հայրապետ կուգա: Վեզիրը շատ մտածոց մեջ մտավ. «Ես ճանփեցի որ չգա, էաս ավլա էկավ»:

Թագավորը ըսըց. - Վեզի՛ր, տղան տար, էրե օսկու խազինեն. ինչ ղտիկ շալկե նը՝ թող շալկե:

Վեզիր դուռը բացեց, մի օսկի տվեց, հինգ էալ սիլլե զարկեց էրեսին. - Փոստը ընձի չտվիր տե, թագավորին տվիր, տե՛ս, ինչ բաներ տի բերեմ քու գլոխ:

Էրկու պասամախ վեր էլավ տղեն. որ թագավորին տ'իմցնե, ըսըց. «Սապր պաշի սալամեթ տըր»*:

Վեզիրը սարայը շինեց, թագավորը իրեք տեղ գընըց-էկավ. սարային մեջ ֆոլդա կը զինե:

- Վեզի՛ր, եախշմիշ կըլլի ֆիլ տիշիյե սարայը ու քյուրքը:

- Թագավո՛ր ապրած, շատ լավ կըլլի, մի բան մահանա կա:

- Ի՞նչ մահանա, ըսե, վեզիր:

- Մահանան ընի է, որ զավակ չունիս, ծերացեր իս. Հնդկաստանու թագավորին աղջիկ մի կա, տասվերկու տարվա է, օ բերիս, Աստված քիզի տղա մի կուտա, որ քու աշխարքը պահպանե. ամա քիզի աղջիկ կըսիմ, հա ինճի տիշլի ...:

- Վեզի՛ր, շատ հեռուն է, ծովով վե՞վ տ'էրթա, ըդի բերե:

- Ավճի Կարապետը տի բերե**:

- Ես քեզ տի ճանփեմ, Հայրապետ, - ըսըց թագավորը, - էրթս Հնդկաստանու թագավորին աղջիկը տի բերես:

- Թագավո՛ր ապրած, սև չէ, ծովով է, ես չեմ կըրնըր, կուզիս գլոխս զարկ:

- Որդի՛, անկարելի բան է, տի էրթս:

---

* Համբերության գլուխը հաջողություն (ծ.ա.):

** Կըսկծու Հարապետի անուն Կարապետ ըսըց (ծ.ա.):

Տղան լալեն էկավ տունը, մեարը տեսավ, ըսըց. - Որդի՛, ես չըսի թե մ'էրթըր, մ'ընըր, էադ վեզիրը քու գլոխ շատ օյին կը բերե. գնա կինե քեռեստանդ քով. էնոք որ ճանփա չհանեցին. կը մնըս հոնի:

Տղան գընըց քեռեստանն քով. մենծ քեռին ըսըց. - Ե'տ կը դառնաս, թագավորին կըսես. «Վեզիրին տասվերկու տարվա աղջիկ մի կա, ընոր պոյին լման՝ քառսուն հատ աղջիկ կուզիմ, քառսվներկու հոգու համար իրեք տարվա ուտելիք՝ վրա գլխով ամենը վեզիրի քիսեն տ'ըլլի, մեկ էալ թեմիզ, աղկեկ կեմի մի, օ վեզիրի քիսեն չըլլի, տիլիմս բոզուլմիշ կըլլի:

Տղան էկավ թագավորին ըսըց. ինք իր տունը գընըց: Վեզիր էլավ, ոտք զարկեց աշխարհքը, օլրտավ օ վարպետ գընընա, կեմի շինող, գընը օլրտավ-օլրտավ, Նոյ նահապետու թոռը գտավ, չէ որ էնոք վարպետ էին. կեմի շինած էին, իրանց փեշեն էր, գընընը, առավ, էկավ թագավորի քով: Վարպետը տեսավ օ ըսի թագավորի բան է:

- Թագավո՛ր ապրած, ես տի շինիմ ամա, տախտակը օսկիեն տի ըլլի: Կընըս նե շինել տուր. անանկ շինիմ օ քառսուն էրկու մարդ տի առնե:

Թագավորը վեզիրին ըսըց. - Տե, վեզի՛ր, շուտով կատարե:

Վեզիրը փարան գողտուկ խազինեն կառներ, ամա հոն էալ փարա չմընընը, ինչ ըրըց, ըրըց, շինեց, պատրաստ տեսավ, կանչեցին տղին օ էրթա: Տղան մտավ կեմուն մեջ, տեսավ իրեք տարվան ուտելիք կա, քառսուն հատ աղջիկ կա, ամա վեզիրին աղջիկը չկա. մեկը ըսըց. - Ես իմ վեզիրին աղջիկը:

- Չէ, դու չես, ես հիմա կը բերեմ վեզիրին աղջիկը:

Տղան խապար տվեց թագավորին, վեզիրի աղջիկն էալ բերին:

Վեզիր թող պաշլայե լացը: Տղան ըսըց աղջիկներուն. - Կեմիին միջուն չէլլաք, ես էրթըմ տուն, մորս բարև մնա էնիմ, գամ:

Գնընց տուն. մեար ու տղա լացին, մեարը ըսըց. - Որդի՛, շատ դժար տավա է, առ էաս գիրքը, հայիր գրքի վրա, դնը. էաս գիրքը օ չտանիս, չես կրնընը էրթըր: Տղան ըս խախթան առավ, մտավ կեմին: Ըսըց. - Նոր քեֆս էկավ:

Չպոխ մի լեցոց. մի կրակ ուզեց. 41 կրակ էկավ: Խախթան հայավ ու գընընը էլավ քեռեստանուն սարային տակ. կեմին հոտ կայնեցոց:

- Աղջիկնե՛ր, դուք հոս կայնեցեք, ես էրթըմ հոս ու գամ:

Գնընց օ քառսուն քեռին էալ նստուկ են. էլան էկան, կեմին տեսան. օ պակաս տեղ չունի. տղին ըսին՝ խախթա ունի՞ս քովդ, հանե:

Հանեց: Մեծ քեռին առավ հայավ, ըսըց. - Շատ պակասութեն կա. էսոր ընկեր մեր խախթան առ օ, էրթըս:

Տղան առավ, բարև մնա էրին, քեռեստանը դարձան. տղան փրցոց կեմին. տվեց անկինը. տասվերկու ամիս թամ ծովու վրա մնըց. նե՛ սև. նե՛ քար, նե՛ լեառ կէրևա. էրկինք ու ծով կար:

Խապար տվեց վեզիրին աղջիկը. - Ահա, լեառտանը երևացին:

Տղան հանեց ծոցուն տյուլպինը, հայավ լեառտանը օր քիչ-քիչ առջին կուգա, հայավ օր էրկու հատ չինարի ծառս բարս կէրևա. քշեցին, էլան էադ տեղ, հալաթները կապեցին չինարի ծառին: Պիթուն էլան դուս, մեկ մեկու աչքը պիտ լուսեն: Աղջիկները ըսին. - Փառք քեզ,Ատվա՛ծ, սևը տեսաք:

Տղան ըսըց. - Աղջիկնե՛ր, դուք հոս քառսունը մեկ օր իմ ճանփան կը պեյեք. ահա, խախթան ձեզի կուտամ, օր չէկա, ետ կը դառնաք, էն քառսուն մարդու քով կէլըք:

Տղան ընկավ ճանփա, գընըց, շատ գընըց, քիչ գընըց օ մե մարդ մի նստեր էր, գետինը կը հայըր:

- Բարև քիզի, աղբեար, ի՞նչ մարաֆեթի տեր իս, «ահա գընըց», «ահա էկավ» կըսիս ու գետինը կը հայիս:

- Ես ի՞նչ մարաֆեթ ունիմ, մարաֆեթը Ավճի Հայրապետինն է օր ֆիլ տիշիյե սարայ է շիներ:

- Ավճի Հայրապետը ես իմ:

- Դու բարով, հազար բարով, ուսկա՞ կուգաս, ո՞ւր կէրթս:

- Թագավորին աղջկան կէրթըմ:

- Ինձիս էալ հետդ չե՞ս տանիր:

- Ի՞նչ կըլլի, կուգաս, էկու, քու անունդ ի՞նչ է:

- Իմ անուն եր տինլեյեն* Կարապետ:

Էսոք էլան ընկան ճանփա, շատ քիչ գընցին, հասան մեկ մարդու, բարև տվին:

- Աստուծո բարին, - ըսըց:

- Ի՞նչ մարաֆեթի տեր իս, որ էաս լեառտանուն կը զինիս, կը դեորես:

- Ես ի՞նչ մարաֆեթ ունիմ. մարաֆեթը Ավճի Հարապետինն է, որ ֆիլ տիշիյե սարայ շինեց:

- էան ես իմ:

- Չըլլի, որ ինձիս էալ աղբեար էնես, հետդ գամ:

- Անունդ ի՞նչ է:

- Անունս Կյուրզիճի Գաբրել է:

---

* Գետնեն լսող (թուրք., ծ.ա.):

էաս իրեքը էլան ընկան ճանփա, շատ քիչ գընցին, ըռաստ էկան մարդու մի, օ սյուրուն կարծե ճանփուն վրա. էրկու ջաղցի քար հագեր է օտներուն, կօլրտի:

- Աղբեա՛ր ի՞նչ մարաֆեթի տեր իս, որ էադ քարերը անցուցածիս ճուռդ, կօլրտիս:

- Ես ի՞նչ մարաֆեթ ունիմ, մարաֆեթը էնոր է, օր ֆիլ տիշիյե սարայ շինեց:

- Ան ես իմ:

- Աղբեա՛ր, ինձիս էալ կը տանե՞ս հետդ:

- Անունդ ի՞նչ է:

- Անունս՝ Չափուկ Կիրակոս:

Շատ քիչ գընցին, ջրի մի քնարը հասան, հոս նե կեչուտ կա. նե քելլեք. նե ղայեխ:

Հայրապետ ըսըց. - Ընկերտա՛նք, նստեցեք, մե մի ջուրի վեր էրթմ, տեսնք, կրնըմ մարդ գընը:

Մի սահաթ գընընց. տեսավ օ մեկ մարդ պարկեր է, դեյնեկով մխտեց, արթընցոց. - Բարև քեզ:

- Աստուծո բարին:

- Դու ի՞նչ մարդ իս, ջուրը տի անցնինք. նե քելլկ կա, նե կեմի:

- Ընկերտոցդ կանչե, գան:

էկան: Ըս մարդը մի ատում ըստդին նետեց, մի ատում ջրի ընդին, բերանը տվեց ջրին, խմեց, ցամաքեցոց:

- Անցեք, - ըսըց, - վեար դիուս:

Անցան:

Ըսըց. - Ի՞նչ մարաֆեթի տեր իս, որ էս դուր բաներ կինիս:

- Ես ի՞նչ մարաֆեթի տեր իմ. մարաֆեթ էնորնը ֆիլ պիշիյե սարայ շինեց:

- Ես էն մարդն իմ:

- Չըլլի ինձիս էալ տանիս:

- Անունդ ի՞նչ է:

- Անունս կլանող Մարկոս:

էլան ընկան ճանփա: Մասիսու լեառան պես մի լեառան տայանմիշ էղան, էաս տեղ ծուն նու հովը շատ կուգա. էլան չուրի եոխուշին կեսը. ընկերտանքը մնացին հոտի: Ավճի Հայրապետ ծունը ճեղքեց. ճանփա զարկեց. էլավ եոխուշին գլոխը, տեսավ մի ծերունի մարդ, պոռուն դրեր է բերնին, կը փչե, երկինք, գետին էղոր փչելուն կը թողան. աշխարք բուք ու

քամի դառուցեր է: Ավճի Հայրապետ քանի հեղ պոռաց. ծերունին սաղր է, չլսեց: Դեյնըկով լավ կը մխթե:

- Բարև՛, պապա:

- Աստուծո բարին:

Էաս ծերունին պոռուն ցգելուն պես, աշխարք էղավ արև, տաք, քամին կըյրվավ, հավան աղկեկ:

- Ի՞նչ մարաֆեթի տեր իս, որ էաս լեառան գլոխը նստեր իս... :

- Մարաֆեթ Ավճի Հայրապետին է, որ ֆիլ տիշիյե սարայ շինեց:

- Ընի ես իմ:

- Չըլլի՞ր ինձիս էալ հետդ տանիս:

- Անունդ ի՞նչ է:

- Անունս բքաբեր Թորոս:

Քաջ ու կտրիճ որսորդ Հայրապետ,
Գետնեն ամեն բան լսող Կարապետ,
Կուրզով լեռներ դուրող Գաբրել,
Ամենաարագահաս Կիրակոս,
Ծովեր ու գետեր կլանող Մարկոս,
Ցուրտ ու բուք բերող Թորոս:

Էսոք էղան վեց հոգի, գըցին. շատ, քիչ գըցին՝ հասան Հնդաստանու թագավորին քաղաքը. դայֆե մի նստան. դայֆեճին մի ծերունի մարդ էր, հարցուկ կինե՝ ո՞ւսկա կուգաք, ո՞ւր կէրթըք:

- Ձեր թագավորի աղջիկ մեր թագավորի ուզելու իք էկեր:

- Դուք էաս թագավորին օրենքը ընդո՞ր է, չեք գիտեր, ես ծեզի խրատ կութամ: Կէրթըք թագավորի քեմեր ղափուն կը հասնիք. մի թարաֆը օսկի սանտալիյե մի կա. մի թարաֆը արզաթ սանտալիյե. էադ օսկի սանտալիյեին վրա նստիք:

Գըցին օսկի սանտալիյեին վրա նստան: Թագավորը հայավ օր աղջիկ ուզելու են էկած. ճանփեց ղափուճին օ տեղ տա: Թագավորը ըսըց. - էդոց մենծը վեր մի է. կանչեցեք գա:

Ավճի Հայրապետ գնըց. գլոխ տվեց թագավորին:

- Ըսե, որդի՛:

- Թագավո՛ր ապրած, քու աղջիկդ մեր թագավորին տի տաս:

- Աստուծո էմրովը ըլլելուն սորա, օրի՞ չտամ, կուտամ, ամա իրեք հատ շարթ ունիմ, օր հանեցիր, տվածս տված է, օր չհանեցիր՝ վեցիդ էալ գլոխը կը կըյրիմ:

Մեկ ընի է որ քառսուն պղինձ ունիմ, ամեն պղնձին քսան ու ութը լիտր բրինձ կը լեցընեմ. ամեն պղնձի քառսուն հատ էալ գոմեշ կը մորթեմ, կէփեմ, քեշկեկ կէնիմ, օ կերտաք, թմավ, քառսուն պղինձն էալ կը լեցնեմ եոթ տարվա գինի, ընի էալ որ խմեցիք, թմավ, աղջիկս կուտամ: Մեկ շարթն էալ ըդի է. գինին որ խմեցիք, քառսուն պղինձ էալ կը լեցընեմ ջուր, իրեք օր, իրեք գիշեր կէփիմ, համամն էալ կը տաքցընիմ. էան ջրով համամի մեջ էկր կրցաք լոգցաք, աղջիկս կուտամ:

Ավճի Հայրապետ ծեառքը ծոցը դրած էկավ, ընկերտոցը ըսըց. - Էլեք, փախեք. թագավոր ըսանկ, ըսանկ ըսըց:

Եուտըճի Մարկոս ըսըց. - Աստված ողորմած է, պղինձնին ինձի հասավ:

Առավոտը կանչեցին օ ուտեն, հերքեշ թամաշա էլած ին, էկր չկրցան ուտիր նը, գլոխնին պիտի զինին:

էան Եուտըճին սոտվըտավ, ըսըց. - Անլի, աղին հայիմ:

էաս ամեն պղնձնին մե ծեառք մի նետեց, սրբեց, նետեց հունա մինակ:

Թագավոր հերսոտավ: Լեցոցեք, ըսըց. - եոթ տարվա գինի պղնձնին:

Գինին էլ խմեց, կործեց պղինձնին բերնիվար: Թագավոր հերսոտավ, ջուրը տաքցոց. էկան օ վեցն էալ լոգնան: Թիփիճի Թորոս պոռուն փչեց. աշխար էղավ ցուրտ ու թիփի, պղնձնին սառոց կապեց, գցին, լոգցան:

Ավճի Հայրապետ ըսըց. - Մեք անոթի իք. հաց տուր, ուտինք:

Թագավոր կանչեց Ավճի Հայրապետին, ըսըց. - Ինձի մարդ մի կա, քառսուն ավուր հեռու ճանփան ջուր մի կա. էան մարդը մեկ օրը կէրթա, կը բերե: Ձինէ մեկը էրթա իմ էլչիի հետ օ ջուր բերեց, էկավ, աղջիկս կուտամ, ուշ էկավ՝ գլոխը կը կըյրիմ:

Ավճին կինե ծեառքը ծոցը դրեց, էկավ ...:

Ձափուկ Կիրակոս ըսըց. - Աղբրտա՛նք, , հեչ չըլլա նը՝ ջաղցին մեկ թեք քարը ոտացս ճռեն կը հանիմ:

Առավոտ ընկան ճանփա, սահաթ մի տեղ գընցին:

էլչին հայավ օ էսոր հետ չպտի կրնր էրթր, ըսըց. - Ես աղջիկ իմ, էրթմ, գինի բերիմ, աղբրի վրա քեյֆ էնիք:

Տղան մընըց, աղջիկ գընըց. գինի ըրաղ առավ, էկավ:

էլան գընցին, պայաղանի աղբրի մի ըռաստ էկան, նստան, պաշլայեցին գինի խմիլը: Տղին գինին շատ դեոր էկավ, ներքի տվեց, խմեց, հերքի տվեց, խմեց, խել թփավ, ընկավ: Աղջիկ նե, էլավ, գընըց, որ ջուրը լեցընե, գա:

Գաք Երտինլեյեն Կարապետին մարաֆեթին. ականջը տվեց գետին. «Ահա, մեր տղան պառկավ, քնավ, էնոցը գընընց. ահա ջուրը լեցոց դարձավ, մեր տղան հոտի քնուկ է»:

Գանք Կյուրգիճի Գաբրիելին, նետեց կյուրզը, գընընց տղուն քով զարկեց, տղան արթընցավ օր թագավորի էոլչին հոտի չէ. լեցոցեր է, կուգա, ինք ջաղցի քարերը հանեց օտպցը. գընընց ջուրը լեցոց, էկավ քարերը հագավ, էրկու սահաթ էալ թեզ գընընց, ջուրը տվեց թագավորին, թագավորը հայավ օ իրավ՝ էն ջուրն է:

- Տվածս տված է, - ըսըց, - գցեք, հանգիստ եղեք, առավոտը կուտամ:

Իրիկունը էկան, իրանց մեջ «աչքդ լոս, աչքդ լոս» էրին:

Առավոտը Ավճի Հարապետ գնընց թագավորին գլոխ տվեց:

- Մեզ ճանփու դիր:

Թագավորը ըսըց. - Հայտե, գընցե՛ք, ես դո՛ր, դուք դո՛ր, ես իրեք տարվա հեռու ճանփա աղջիկ չիմ իտար. գընցե՛ք բաներնիդ:

Ավճին ձեառքը ծոցը դընընց. - էլե՛ք, էրթընք, - ըսըց:

- Չիք էրթընր ամե հալով, - ըսըց Թիփիճի Թորոս:

Պոռուն առավ, փչեց. էրկինք, գետին պաշլայեց թիփի ինիլը: Եուտընճի Մարկոս ընկավ քաղքին մեջ. մարդ տեվե, գոմեշ, ձի, ինչ օր ըռաստ գար, կը կլար ու կօլրտեր, սով գցեց քաղքի մեջ. էադ մարդուն նե թուր կը բաներ, նե թուֆենկ, մեռնիլ էալ չի կար. վեր մի ծառին ձեառք գցեր, կը քաշեր քոքուն, նետեր դեանը: Էնոր մեռնիլը՝ կեաճակը ըռաստ գար նե, զինիլու ըլլիր, կը պաներ, թե չէ մեռնիլ չկա:

Թիփիճին պոռուն փչեց, էնանկ ցուրտ էրավ, էնանկ ցուրտ, որ սարայի մերմեր քարերը քյուլլի ճաթեցավ ցրտուն: Քաղքին մարդը թագավորին տավաճի կայնավ, թե՝ աղջիկդ տի տաս: Թագավորը ըսըց. - Առավոտը թող գան, առնեն, էրթըն:

Առավոտը աղջիկը ձինը հեծոցին, մնընք էրթընք բարև ըրին, ընկան ճանփա: Շատ-քիչ գընցին, հասան Թիփիճու տեղը, մնընք էրթընք բարև ըրին, գցին: էադ ինքը իրան ըսըց. «Իմ հեարս էաս Թիփճուքին կը բաներ, ես էալ կը բանիմ»:

Գընցին, հասան ջուրը, Եուտընճին բերանը տվեց, ցամքեցոց: Անցան էսոք. մնընս էրթընս բարի, ըսին: Եուտընճին էալ հոտի մնընց:

Էսոք գընցին, հասան չոպնի սյուրույի տեղը, հինգ հատ օխչար կարծվի ճանփուն վրա, մեկալ ամենքը լեառն է էլած, գեալն կերեր:

Ավճի Հայրապետ ըսըց չոպնին. - Աղբեա՛ր, շատ զարար տվիմ ես քիգի:

Չափուկ Կիրակոս ըսըց. - Մեկ ոտացս ջաղցի քարը կը հանիմ, գեալերը կը պանիմ, սյուրուն էալ կը թոփիմ:

Էադ էալ հոդ կեցավ: Մնըք, էրթըք բարի ըրին, հասան Կյուրզիճին լեառան վրա. էնոր էալ մնըք բարով ըրին, գըցին Երտինլեյենի տեղը հասան, ըդի էալ հոտ մընըց: Մընըց աղջիկն ու տղեն: Աղջիկը տահա չէր խոսիր տղայի հետ. թուղթը հայավ, ըսըց. - Թագավորն ու վեզիր քու գլոխ օյին տի խաղան, դու ինձիս թագավորի համա՞ր կը տանիս, թե քիզի համար:

- Թագավորին համար:

- Ես թագավորին չիմ առնիր, քիզի կառնիմ, ամա վեզիրը քիզի կեմի տի ղրկե որ մընընըս մեջը: Կեմին զեհերլի է, չըլլի օր մընընս մեջը. ես էալ, դուն էալ կը մեռնիք, ես իմաց էղա՝ ինչ փորձանք է բերեր քու գլոխ, վեզիրն է բերեր:

Տվեց տղային չելիկ մի ու քոլոզ մի: Քոլոզը հագնիր, մարդու էալ չէրևար, չելիկն էալ դոր ղրկեր, կէրթըր, կը պաներ: Գըցին, հասան կեմին օ փրցոցած՝ ետ օլրված՝ կէրթն քաղաք: Տղան պոռաց. վեզիրի աղջիկ նե, տիրեկն ի վեր էլավ, հայավ՝ Ավճի Հայրապետ ու թագավորի աղջիկ էկան. կեմին ետ դառոցին, հեծան կեմին, շատ ուրախութին էղավ միջվանը, կեմին քշեցին անկինը, հավեն աղկեկ էր: Ավճին ըսըց. - Օ՞ֆ, հոգիս անճախ ըռահաթավ:

- Ղայֆե մի բերեք, - ըսըց:

Էան ըսըց՝ ես տանիմ, էան ըսըց՝ ես տանիմ:

42 ֆինճան ղայֆե բերին մեկի տեղ:

Գըցին, մոտեցան քաղքին, վեզիրն է, տուներն էլեր՝ սարայը կէրթըր, դեպի ծովը հայավ օր մեկ կեմի կուգա. փառլ-փառլ փառլամիշ կըլլի, փուսուլան առավ, աչիցը դրավ որ իրեն շինած կեմին է. պաշլայեց դողալը, խավթաճուն 100 օսկի տվեց, գիր գրեց, ըսըց. «Ավճի Հայրապետ ու թագավորի աղջիկ էան կեմու միջուն էլլեն, էաս կեմին թող նստին»: Խավթաճին թուղթը էրկնցոց օր տա, աղջիկը առավ, ճղեց, նետեց ծովը:

Էլան քնարը, թագավորը շատ ուրախութան մեջ մընըց, ըսըց. - Մզիկան փչվին, տավուլպազնին զարկվին, թագավորի աղջիկը առեք, գըցեք համամը, լոգցուցեք օր տ'առնիմ:

Թագավորի աղջիկը ըսըց տղին. - Քոլոզդ զարկ գլոխդ, չելիկդ զարկ մեջքդ:

Էլան, գցին համամը, լոգցան, մեկ տեղ գըցին սարայը:

Թագավորը գնըց աղջկա քով:

- Բարև՛, թագավորի աղջիկ:

- Աստուծո բարին:

- Էրեսդ բաց, մե մի տեսնըմ:

- Գնա՛ վլացվիր, էկուր, էրեսս կը բանամ, անտա տես:

Թագավորին իլաճը կըյրվավ, իպրուղը առավ, գընըց:

Ավճի Հարապետ իրան չելիկին ըսըց. - Գընըս, թագավորին գլոխը կըյրես, ցգես օտաց ճանփան:

Չելիկը գընըց: Ավճին մտավ ծոցի մեջ մընըց թե էաս խոսքով կըլլի, էրթըմ տեսնըմ, իրավ է:

Գնըց, ի՞նչ տեսնե՝ գլոխը կըյրըմուն է, արին լցմուն: Վեզիր թագավորին կնքահայր տի ըլլի. առավոտ նե, գնըց օր թագավորն ու աղջիկ առնե, էրթա պսակե: Ավճին վեզիրի գլոխն կըյրըց, նետեց թագավորի վրա: Հագավ թագավորի շորերը Ավճի Հայրապետ, նշան էալ առավ վրան, էղավ թագավոր, կեմու միջուն աղջիկները բերեց, քեռեստաննուն հետ կարգեց, պսակեց վիճակով:

Էնոք հասան իրանց մուրազին, դարձան Ավճի Հայրապետին հարսնիքը բռնեցին, պսակեցին, թախտին վրա նստըցուցին, որ խաղաղքեն էրավ աշխարհի մեջ: